



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԱՆՏՈՆՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանգաղ թիվ 3946/05)

ՎՃԻՌ

ԱՏՐԱՄԲՈՒՐԳ

2 հոկտեմբերի 2012

ՎԵՐՋՆԱԿԱՆ Է

02/01/2013

Սույն վճիռը վերջնական է դաձել Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

Անտոնյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (երրորդ բաժանմունք)
Պալատը՝ հետևյալ կազմով՝

Josep Casadevall, Նախագահ,
Egbert Myjer,
Corneliu Bîrsan,
Alvina Gyulumyan,
Luis López Guerra,
Nona Tsotsoria,
Kristina Pardalos՝ դատավորներ

և Santiago Quesada ՝ Բաժանմունքի քարտուղար,

Խորհրդակցելով 2012 թվականի սեպտեմբերի 11-ի դռնփակ նիստում
կայացրեցին հետևյալ վճիռը, որն ընդունվել է նույն օրը

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Վարույթը հարուցվել է 2005 թվականի հունվարի 17-ին Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի («Կոնվենցիա») 34-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի քաղաքացի տիկին Վեներա Անտոնյանի («դիմումատու») կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ բերված թիվ 3946/05 գանգատի հիման վրա:
2. Դիմումատուին, ում իրավաբանական օգնություն էր տրամադրվել, ներկայացնում էր Ֆրանսիայի Հոենհայմ քաղաքում գործող փաստաբան տիկին Ն. Կարապետյանը: ՀՀ Կառավարությանը (այսուհետ՝ «Կառավարություն») ներկայացնում էր Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը:
3. Դիմումատուն պնդում էր, որ Հայաստանի իշխանությունները, հրաժարվելով իր մահացած զարմուհու երկու երեխաներին իր բնակարանում հաշվառումից հանել և իրենից պահանջելով փոխհատուցում վճարել նրանց, որպեսզի դադարեցնի այդ բնակարանի նկատմամբ նրանց՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը, միջամտել են իր գույքից անարգել օգտվելու իր իրավունքին, որը երաշխավորված է թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով:
4. 2007 թվականի փետրվարի 2-ին գանգատն ուղարկվել է Կառավարություն: Որոշվեց նաև միաժամանակ իրականացնել գործի ընդունելիության և ըստ էության քննություն (29-րդ հոդվածի 1-ին կետ):

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

1. Դիմումատուն ծնվել է 1937 թվականին և այժմ բնակվում է Երևանում: Նա երկրորդ կարգի հաշմանդամ է:

2. Սովետական ժամանակաշրջանում (կոնկրետ ժամանակը չի նշվում) պետությունը դիմումատուին Երևան քաղաքում վարձակալության իրավունքով բնակարան է հատկացրել:

3. 1981 թվականին դիմումատուի զարմուհին, ով Երևան էր տեղափոխվել ուսման նպատակով, դիմումատուի համաձայնությամբ հաշվառվել է վերջինիս բնակարանում: 1986 թվականին նա վերադարձել է Հրազդան քաղաք՝ առանց հաշվառումից դուրս գալու: 1989 թվականին դիմումատուի զարմուհին ամուսնացել է և, համապատասխանաբար, 1989 ու 1991 թվականներին ունեցել է երկու երեխա: Դիմումատուի համաձայնությամբ երեխաները նույնպես հաշվառվել են դիմումատուի բնակարանում, որպեսզի այդ հասցեից բուժօգնություն ստանան:

4. 1993 թվականի փետրվարի 11-ին դիմումատուն բնակարանի նկատմամբ սեփականության իրավունք է ձեռք բերել, որը նոտարական կարգով վավերացվել է 1993 թվականի փետրվարի 19-ին:

5. 1996 թվականին դիմումատուի զարմուհին մահացել է: Ուստի, դիմումատուի բնակարանում նա հաշվառումից հանվել է:

6. 2003 թվականի դեկտեմբերի 26-ին դիմումատուն դիմել է Երևանի Քանաքեռ-Զեյթուն շրջանի ոստիկանության բաժանմունք (այսուհետ՝ «ոստիկանության տարածքային բաժանմունք»)՝ փորձելով երեխաներին հաշվառումից հանել:

7. 2004 թվականի հունվարի 20-ին ուղարկված նամակով ոստիկանության տարածքային բաժանմունքը դիմումատուն տեղեկացրել է՝ երեխաներին հաշվառումից հանելու իր մերժման մասին՝ հիմնավորելով, որ ըստ համապատասխան կանոնների, անչափահասներին կարելի է հաշվառումից հանել միայն նրանց ծնողներից մեկին հաշվառումից հանելու դեպքում, ծնողների կամ երեխաների օրինական ներկայացուցիչների դիմումի հիման վրա, ուսման կապակցությամբ, կամ դատարանի համապատասխան կարգադրությամբ:

8. Չնշված ամսաթվին դիմումատուն դատարանում վիճարկել է այս մերժումը՝ փորձելով ոստիկանության տարածքային բաժանմունքին պարտավորեցնել երեխաներին հաշվառումից հանել և պնդելով, որ վերջիններս նրա բնակարանում երբեք չեն բնակվել:

9. 2004 թվականի մարտի 15-ին Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատարանը մերժել է դիմումատուի բողոքը՝ գտնելով, որ մերժումը եղել է օրենքի սահմաններում, քանի որ ոստիկանության տարածքային բաժանմունքը գործել է համաձայն ՀՀ Կառավարության՝ 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 հրամանի: Համաձայն վճռի շարադրանքի՝ կողմերին

պատշաճ կերպով տեղեկացվել է դատական լսումների մասին, սակայն նրանք չեն ներկայացել: Ըստ դիմումատուի՝ ինքն այդ լսումների մասին չի տեղեկացվել:

10. 2004 թվականի մարտի 25-ին դիմումատուն վերաքննիչ բողոք է ներկայացրել:

11. 2004 թվականի հունիսի 8-ին քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը նույն հիմքով մերժել է դիմումատուի դիմումը: Ըստ այս վճռի շարադրանքի՝ դիմումատուն և նրա ներկայացուցիչը դատական լսումների ժամանակ բանավոր հայտարարություն են արել: Ըստ դիմումատուի՝ ոչ իրեն, ոչ իր ներկայացուցչին որևէ բանավոր հայտարարություն անելու հնարավորություն չի տրվել: Պարզվել է նաև, որ երեխաների հայրը ներկա է եղել բողոքարկման լսումներին և դիմումատուի հայցը մերժելու միջնորդություն է արել:

12. Չնշված ամսաթվին դիմումատուն օրենքի կիրառելիության մասով վճռաբեկ բողոք է ներկայացրել:

13. 2004 թվականի հուլիսի 23-ին վճռաբեկ դատարանը մերժել է նրա բողոքը՝ գտնելով, որ

«Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը դադարելու վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում այդ իրավունքը կարող է սեփականատիրոջ պահանջով դադարեցվել դատական կարգով՝ սեփականատիրոջ կողմից շուկայական գնով փոխհատուցելու միջոցով:

Նման դեպքերում օրենքի կիրառելիության մասով բողոքում առաջ քաշված փաստարկները հիմնավորված չեն, քանի որ [երեխաների] բնակելի տարածության օգտագործման իրավունքը կարող է դադարեցվել միայն համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի»:

II. II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. 1982 թվականի ՀՀ Բնակարանային օրենսգիրքը (ուժը կորցրել է 2005 թվականի նոյեմբերի 26-ին)

14. Համաձայն 4-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության տերիտորիայում գտնվող բնակելի տները, ինչպես նաև այլ շինությունների բնակելի տարածությունները կազմում են բնակարանային ֆոնդը:

15. Համաձայն 9-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները իրավունք ունեն սահմանված կարգով բնակելի տարածություն ստանալու պետական կամ հանրային բնակարանային ֆոնդի տներում կամ բնակարանային-շինարարական կոոպերատիվների տներում:

16. Համաձայն 49-րդ հոդվածի՝ պետական կամ հանրային բնակարանային ֆոնդի տանը բնակելի տարածություն հատկացնելու վերաբերյալ որոշման հիման

վրա համապատասխան գործադիր կոմիտեն քաղաքացուն տալիս է օրդեր, որը հատկացված բնակելի տարածությունն զբաղեցնելու միակ հիմքն է:

17. Համաձայն 51-րդ հոդվածի՝ պետական և հանրային բնակարանային ֆոնդի տներում բնակելի տարածության վարձակալության պայմանագիրը կնքվում է գրավոր ձևով, բնակելի տարածության օրդերի հիման վրա, վարձատուի՝ բնակարանային-շահագործման կազմակերպության և վարձակալի՝ քաղաքացու միջև, որի անունով տրված է օրդերը: Պետական և հանրային բնակարանային ֆոնդի տներում բնակելի տարածություններից օգտվում են բնակելի տարածության վարձակալության պայմանագրին համապատասխան:

18. Համաձայն 53-րդ հոդվածի՝ վարձակալի ընտանիքի այն անդամները, որոնք բնակվում են նրա հետ համատեղ, վարձակալի հետ համահավասար օգտվում են բնակելի տարածության վարձակալության պայմանագրից բխող բոլոր իրավունքներից և կրում են բոլոր պարտականությունները:

19. Համաձայն 54-րդ հոդվածի՝ վարձակալի ընտանիքի անդամների թվին են պատկանում վարձակալի ամուսինը, նրանց երեխաները և ծնողները: Այլ անձինք կարող են վարձակալի ընտանիքի անդամներ ճանաչվել, եթե նրանք բնակվում են վարձակալի հետ համատեղ և նրա հետ վարում են ընդհանուր տնտեսություն:

20. Համաձայն 55-րդ հոդվածի՝ վարձակալն իրավունք ունի իր հետ բնակվող ընտանիքի անդամների համաձայնությամբ իր զբաղեցրած բնակելի տարածությունում սահմանված կարգով բնակեցնելու իր ամուսնուն, երեխաներին, ծնողներին, ինչպես նաև այլ անձանց: Սույն հոդվածին համապատասխան, բնակելի տարածությունում բնակեցված անձինք այդ բնակելի տարածությունից օգտվելու իրավունք են ձեռք բերում այնտեղ բնակվող մյուս անձանց հետ համահավասար, եթե բնակեցնելիս այդ քաղաքացիների, վարձակալի և նրա հետ բնակվող նրա ընտանիքի անդամների միջև այլ համաձայնություն չի եղել:

21. Համաձայն 59-րդ հոդվածի՝ վարձակալի կամ նրա ընտանիքի անդամների ժամանակավոր բացակայության դեպքում նրանց համար բնակելի տարածությունը պահպանվում է մինչև վեց ամիս: Սահմանված ժամկետներից ավելի անձի բացակայության հետևանքով բնակելի տարածությունից օգտվելու՝ այդ անձի իրավունքը կորցված է ճանաչվում դատական կարգով՝ վարձատուի կամ այդ բնակելի տարածությունում բնակվելու մնացած մյուս մշտական օգտագործողների հայցով:

Բ. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրքը (ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ին)

22. Համաձայն 23-րդ հոդվածի 2-րդ կետի՝ տասնչորս տարեկան չդարձած անչափահասների կամ խնամակալության տակ գտնվող քաղաքացիների բնակության վայր է համարվում նրանց օրինական ներկայացուցիչների՝ ծնողների, որդեգրողների կամ խնամակալների բնակության վայրը:

23. Համաձայն 163-րդ հոդվածի 1-ին կետի՝ օգտագործման իրավունքը գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

24. Համաձայն տվյալ ժամանակահատվածում ուժի մեջ գտնվող 225-րդ հոդվածի 1-րդ կետի՝ բնակելի տարածության սեփականատիրոջ ընտանիքի անդամները և այլ անձինք բնակելի տարածությունն օգտագործելու իրավունք ունեն, եթե այդ իրավունքը գրանցված է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով սահմանված կարգով:

25. Համաձայն տվյալ ժամանակահատվածում ուժի մեջ գտնվող 225-րդ հոդվածի 2-րդ կետի՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքի ծագումը, իրականացման պայմանները և դրա դադարումը սահմանվում են սեփականատիրոջ հետ նոտարական կարգով վավերացված գրավոր համաձայնությամբ: Բնակելի տարածության օգտագործման իրավունքը դադարելու վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում այդ իրավունքը կարող է սեփականատիրոջ պահանջով դադարեցվել դատական կարգով՝ սեփականատիրոջ կողմից շուկայական գնով փոխհատուցելու միջոցով:

26. Համաձայն տվյալ ժամանակահատվածում ուժի մեջ գտնվող 225-րդ հոդվածի 4-րդ կետի՝ բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեցող անձը ցանկացած անձից՝ ներառյալ սեփականատիրոջից, կարող է պահանջել վերացնելու բնակելի տարածության նկատմամբ իր իրավունքի խախտումները:

Գ. Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի և Արհեստակցական միությունների հայկական հանրապետական խորհրդի «Պետական ու հանրային բնակարանային ֆոնդի տներում բնակարաններն որպես անձնական սեփականություն քաղաքացիներին վաճառելու մասին» թիվ 272 որոշումը (1989 թվականի հունիսի 13)

27. Համաձայն 20-րդ պարբերության՝ պետական ու հանրային բնակարանային ֆոնդի տներում բնակարանները որպես անձնական սեփականություն վաճառվում են տվյալ բնակարանի՝ Բնակարանային օրենսգրքի 54-րդ հոդվածում նշված վարձակալներին և նրանց ընտանիքի անդամներին, ընտանիքի բոլոր չափահաս անդամների գրավոր համաձայնության դեպքում: Նրանց ցանկության դեպքում բնակարանը կարող է նրանց վաճառվել որպես ընդհանուր սեփականություն:

Դ. ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշումը «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» (ուժի մեջ է մտել 1998 թվականի դեկտեմբերի 25-ին)

28. Համաձայն տվյալ ժամանակահատվածում ուժի մեջ գտնվող 20-րդ պարբերության՝ Հայաստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին հաշվառելը և հաշվառումից հանելն իրականացվում է նրանց իրավունքների ու ազատությունների, ինչպես նաև պետության և այլ քաղաքացիների նկատմամբ նրանց պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու նպատակով:

29. Համաձայն տվյալ ժամանակահատվածում ուժի մեջ գտնվող 21-րդ պարբերության՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հաշվառումը կատարվում է ըստ նրանց ժամանակավոր կամ մշտական բնակության վայրի՝ միայն մեկ հասցեով:

30. Համաձայն տվյալ ժամանակահատվածում ուժի մեջ գտնվող 22-րդ պարբերության՝ ժամանակավոր բնակության վայր է համարվում նաև սեփականության, վարձակալության կամ ենթավարձակալության իրավունքով նրան չպատկանող բնակելի տարածություն, որոնք չեն հանդիսանում քաղաքացու մշտական բնակության վայրը:

31. Համաձայն տվյալ ժամանակահատվածում ուժի մեջ գտնվող 23-րդ պարբերության՝ մշտական բնակության վայր է համարվում այն վայրը, որտեղ Հայաստանի Հանրապետության քաղաքացին բնակվում է մշտապես կամ առավելապես:

32. Համաձայն 29-րդ պարբերության՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու՝ ըստ ժամանակավոր բնակության վայրի հաշվառման վերցվելու մասին դիմումը կարող է մերժվել, եթե, այլոց թվում, չկա բնակելի տարածության սեփականատիրոջ գրավոր համաձայնությունը: Անչափահաս երեխաների հաշվառումը կատարվում է, անկախ, ի թիվս այլոց՝ սեփականատիրոջ գրավոր համաձայնությունից, ծնողներից որևէ մեկի կամ օրինական ներկայացուցչի հաշվառման վայրում:

33. Համաձայն 39-րդ պարբերության՝ ծնողների հետ համատեղ բնակվող՝ 16 տարին չլրացած անչափահասների հաշվառումը կատարվում է ծնողների անձը հաստատող փաստաթղթերի և անչափահասի ծննդյան վկայականի հիման վրա նրանց վերաբերյալ տվյալները տնային գրքում կամ ծնողի հաշվառման քարտում գրառելու միջոցով:

34. Համաձայն 44-րդ պարբերության՝ ըստ ժամանակավոր բնակության վայրի և ըստ մշտական բնակության վայրի հաշվառված Հայաստանի Հանրապետության քաղաքացիները հաշվառումից հանվում են, ի թիվս այլոց, բնակության վայրը փոխելու, մահվան կամ հաշվառման հիմք հանդիսացող

փաստաթղթերի կամ տեղեկությունների իրականությանը չհամապատասխանելու դեպքում: Հաշվառում կատարող մարմինները եռօրյա ժամկետում փաստաթղթերի հիման վրա Հայաստանի Հանրապետության քաղաքացուն հանում են ըստ մշտական բնակության վայրի հաշվառումից և անձնագրում դրա մասին կատարում համապատասխան նշում:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

ԳՈՐԾԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

35 Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշում է, որ 2007 թվականի սեպտեմբերի 12-ին և հոկտեմբերի 13-ին թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի հիման վրա բողոքի վերաբերյալ իր դիտարկումներում դիմումատուն վկայակոչել է նաև կոնվենցիայի 6-րդ և 8-րդ հոդվածներով իրեն տրված իրավունքների ենթադրյալ խախտում:

36 Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կարծիքով այս նոր բողոքները չեն հավելում դիմումատուի նախնական բողոքներին, որոնք առաջ են քաշվել ավելի քան երկու տարի առաջ դատարան ներկայացված դիմումի մեջ: ՄԻԵԴ-ը, հետևաբար, գտնում է, որ այս հարցերն սույն համատեքստում դիտարկելն այժմ նպատակահարմար չէ (տե՛ս Սկուբենկոն ընդդեմ Ուկրաինայի (Որոշում), թիվ 41152/98 2001 թվականի ապրիլի 6):

II. ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

37 Դիմումատուն բողոքել է, թե հրաժարվելով երեխաներին իր բնակարանում հաշվառումից հանել և իրենից պահանջելով փոխհատուցում վճարել նրանց, որպեսզի դադարեցնի իր բնակարանի նկատմամբ նրանց՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը՝ Հայաստանի իշխանությունները միջամտել են իր գույքից անարգել օգտվելու իր իրավունքին: Այս կապակցությամբ նա հղում է կատարում թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածին, որում նշվում է՝

«Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից՝ բացառությամբ հոգուտ հանրային շահի և համաձայն օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով նախատեսված պայմանների:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, որևէ կերպ չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքը, որոնք նա անհրաժեշտ է համարում՝ սեփականության՝ ընդհանուր շահերին համապատասխան օգտագործումը հսկելու և հարկերի կամ այլ գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար»:

Ա. Ընդունելիությունը

38. Կառավարությունը նշել է, որ դիմումատուն չի սպառել հարցի լուծման բոլոր ներպետական պաշտպանության միջոցները: Մասնավորապես, նրանք պնդում են, որ չնայած այն փաստին, որ դիմումատուն վկայակոչում է իր գույքից անարգել օգտվելու իր իրավունքի ենթադրյալ խախտում, քանի որ իր մահացած զարմուհու երեխաներն իր բնակարանի նկատմամբ ունեին բնակելի տարածության օգտագործման իրավունք, այնուամենայնիվ, ազգային դատարաններում նրա հարուցած գործերը բացառապես վերաբերում էին հաշվառումից նրանց հանելուն: Այնուամենայնիվ, բնակելի տարածության օգտագործման իրավունքը ծագել էր այդ իրավունքի պետական գրանցման պահից՝ համաձայն օրենքով սահմանված կարգի, և ոչ թե բնակարանում հաշվառվելու պահից: Ի հավելումն, այդ իրավունքը դադարեցնելու համար իրավասու միակ մարմինը դատարանն էր: Այս մասին իրականում նշվել է վճռաբեկ դատարանի կողմից իր՝ 2004 թվականի հուլիսի 23-ի որոշման մեջ, որով այն դիմումատուին տեղեկացնում է նրա սեփականության իրավունքի վերականգնման հնարավորության մասին՝ առանձին դատական վարույթ հարուցելու դեպքում: Ուստի, դիմումատուն չի օգտվել ներպետական օրենսդրությամբ նախատեսված միակ արդյունավետ պաշտպանության միջոցից, որպեսզի դադարեցնի իր բնակարանի նկատմամբ երեխաների՝ բնակելի տարածության օգտագործման ենթադրյալ իրավունքը: Ավելին, ինչպես առաջարկվել է վճռաբեկ դատարանի կողմից, դիմումատուն դեռ կարող էր որևէ դատարան դիմել և իր իրավունքները վերականգնել դատական վարույթի միջոցով:

39. Դիմումատուն պնդել է, որ սպառել է ներպետական պաշտպանության բոլոր միջոցները՝ հայց ներկայացնելով պետական պաշտոնյաների անօրինական գործողությունների դեմ:

40. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կցանկանար ի սկզբանե նշել, որ այն պնդումը, թե դիմումատուի մահացած զարմուհու երեխաները դիմումատուի բնակարանի նկատմամբ բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեն, արտահայտվել է վճռաբեկ դատարանի կողմից՝ ոստիկանության տարածքային բաժանմունքի՝ երեխաներին դիմումատուի բնակարանում հաշվառումից հանելու մերժման օրինականության վերաբերյալ վարույթի ժամանակ: Սույն գանգատը ՄԻԵԴ ներկայացնելիս՝ դիմումատուն իր վիշտն է հայտնել ընդհանուր իրավիճակի կապակցությամբ, որում նա հայտնվել էր, մասնավորապես, երեխաներին իր բնակարանում հաշվառումից հանելու՝ իշխանությունների մերժումը և նրանց կողմից ներկայացված պահանջն այն մասին, որ նա երեխաներին փոխհատուցում վճարի, որպեսզի դադարեցնի իր բնակարանի նկատմամբ նրանց՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը: Ուստի, հակառակ կառավարության առաջարկածի, դիմումատուն բողոքել է իր գույքից անարգել օգտվելու իրավունքի ոտնահարման կապակցությամբ ոչ թե այն պատճառով, որ իր մահացած զարմուհու երեխաները

օգտվել են իր բնակարանի նկատմամբ բնակելի տարածության օգտագործման իրավունքից, այլ այն համատեքստում և այն պատճառով, որ իշխանությունները հրաժարվել են երեխաներին իր բնակարանում հաշվառումից հանել:

41. Այսպիսով, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նաև գտնում է, որ կառավարության այն պնդումը, թե բոլոր միջոցները չեն սպառվել, սերտորեն կապված է սույն բողոքի էության հետ և, հետևաբար, պետք է միացվի՝ ըստ էության լուծման ենթակա գործին:

42. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտնում է, որ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3 (ա) կետի սահմաններում այս բողոքն ակնհայտորեն անհիմն չէ: Այն նաև նշում է, որ որևիցե այլ հիմքով այն անընդունելի չէ: Ուստի, այն պետք է ընդունվի վարույթ:

Բ. Գործի ըստ էության քննությունը

1. Արդյո՞ք իր գույքից անարգել օգտվելու՝ դիմումատուի իրավունքի նկատմամբ տեղի է ունեցել միջամտություն

ա) Կողմերի հայտարարությունները

43. Դիմումատուն պնդում էր, որ իր գույքից անարգել օգտվելու իր իրավունքին միջամտություն է կատարվել: Մասնավորապես, նա չի կարողացել իր բնակարանը վարձակալության հանձնել, քանի որ երեխաներն այդտեղ են եղել հաշվառված:

44. Կառավարությունը նշել է, որ դիմումատուի՝ գույքից անարգել օգտվելու իրավունքին միջամտություն տեղի չի ունեցել, քանի որ դիմումատուի հարուցած գործը բացառապես վերաբերում էր երեխաներին իր բնակարանում հաշվառումից հանելուն: Այս առումով կառավարությունը կրկնեց, որ համաձայն Հայաստանի օրենսդրության՝ ոստիկանության անձնագրային բաժնի կողմից անձին որևէ բնակարանում հաշվառելն իրավական հիմք չի հանդիսանում՝ այդ բնակարանի նկատմամբ որևէ սեփականության իրավունք ամրագրելու համար: Մասնավորապես, ոստիկանությունում հաշվառելը ոչ այլ ինչ է, քան հիմնական, ժամանակավոր կամ փաստացի բնակության վայրի մասին տվյալների համակարգ, որը պահվում է, որպեսզի նպաստի քաղաքացիների իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացմանը, ինչպես օրինակ՝ ընտրություններում քվեարկելու կամ դատարանից ծանուցագիր ստանալու համար: Ինչ վերաբերում է բնակելի տարածության օգտագործման իրավունքին, այդ իրավունքը ծագել է միայն դրա պետական գրանցման պահից՝ օրենքով սահմանված կարգով: Բացի այդ, դիմումատուի այն պնդումը, թե նա հնարավորություն չի ունեցել իր բնակարանը վարձակալության հանձնել, անհիմն է, քանի որ գործում ոչ մի ապացույց չկար, որը կվկայեր այն մասին, որ նա երբևիցե *դե յուրե (de jure)* կամ *դե ֆակտո (de facto)* զրկվել է այդպես գործելու հնարավորությունից:

բ) Դատարանի գնահատականը

45. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կրկին նշում է, որ թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի գլխավոր նպատակն է անձին պաշտպանել իր գույքից անարգել օգտվելու հարցում պետության կողմից անհիմն միջամտությունից: Այնուամենայնիվ, համաձայն Կոնվենցիայի 1-ին հոդվածի, յուրաքանչյուր պայմանադիր կողմ «[իր] իրավասության շրջանակներում բոլորի համար ապահովում է Կոնվենցիայով սահմանված իրավունքներն ու ազատությունները»: Այս ընդհանուր պարտականության կատարումը կարող է դրական պարտավորություններ առաջացնել, որոնք հատուկ են Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների արդյունավետ իրականացմանը: Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համատեքստում այդ դրական պարտավորությունները կարող են պետությունից պահանջել, որ վերջինս անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի, որպեսզի պաշտպանի սեփականության իրավունքը (տե՛ս *Բրոնյովսկին ընդդեմ Լեհաստանի* [GC], թիվ 31443/96, § 143, ՄԻԵԴ 2004-V):

46 Սույն գործում դիմումատուն բողոքել է, որ Հայաստանի իշխանությունները, հրաժարվելով իր մահացած զարմուհու երեխաներին իր բնակարանում հաշվառումից հանել և իրենից պահանջելով փոխհատուցում վճարել նրանց, որպեսզի դադարեցնի իր բնակարանի նկատմամբ նրանց՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը, միջամտել են իր գույքից անարգել օգտվելու իր իրավունքին: Ուստի, ՄԻԵԴ-ը գտնում է, որ սույն գործը վերաբերում է մի վեճի, որը գտնվում է հանրային իրավունքի գործողության ոլորտում և վարչական հայեցողության շրջանակներում, այլ ոչ թե մասնավոր իրավունքի: Այս իմաստով՝ հնարավոր միջամտության հարցն սերտորեն կապված է հետագայում բողոքն ըստ էության քննության հետ: Հետևաբար, ՄԻԵԴ-ը պետք է ամբողջականորեն ուսումնասիրի դիմումատուի բողոքն այն մասին, որ երեխաներին իր բնակարանում հաշվառումից հանելու անհնարինության պատճառով խախտվել է իր գույքից անարգել օգտվելու իր իրավունքը:

47. Ինչ վերաբերում է միջամտության բնույթին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշում է, որ սույն գործում գույքից զրկում չի եղել: Ավելին, դիմումատուի բնակարանում երեխաների հաշվառված մնալը *դե յուրե (de jure)* համարժեք չէր գույքի օգտագործումը հսկելուն, քանի որ Հայաստանի օրենսդրությունն այս առումով դիմումատուի սեփականության իրավունքի որևէ սահմանափակում չէր նախատեսում: Պետք է նշել, որ դիմումատուն որևէ ապացույց չի ներկայացրել ի հավաստումն իր այն պնդման, որ նա հնարավորություն չի ունեցել իր բնակարանը վարձակալության հանձնել: Մյուս կողմից, դիմումատուի կամքին հակառակ իր բնակարանում երեխաների հաշվառված մնալը կարող է համարվել, որ դիմումատուին՝ որպես բնակարանի սեփականատիրոջը, էական անհարմարություն է պատճառել և, հետևաբար, ինքնին թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանություն է պահանջում: Ավելին, երեխաների հաշվառված մնալը կարող է բնակարանը մեկ այլ անձի

վաճառելու իրական հնարավորությունից դիմումատուին *դե ֆակտո (de facto)* զրկել համարվել: Նման հանգամանքների պարագայում ՄԻԵԴ-ը գտնում է, որ իր գույքից անարգել օգտվելու դիմումատուի իրավունքի ենթադրյալ խախտումը պետք է գտնվի սույն հոդվածի առաջին պարբերության առաջին նախադասության, մասնավորապես՝ գույքից անարգել օգտվելու, գործողության շրջանակներում:

2. Արդյո՞ք միջամտությունն արդարացված էր

ա) Իրավաչափությունը

48. Դիմումատուն նշել է, որ երեխաներին իր բնակարանում հաշվառումից հանելու մերժումն անօրինական է եղել, քանի որ Կառավարության թիվ 821 Որոշումը չէր նախատեսում հաշվառումից հանելը մերժելու այդպիսի հիմքեր: Նմանապես, վճարբեկ դատարանի այն պնդումը, որ երեխաները բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեն, և որ այդ իրավունքը դադարեցնելու համար դիմումատուն պետք է նրանց փոխհատուցում վճարի, անհիմն է, քանի որ դա հակասում է Բնակարանային օրենսգրքի 54-րդ և 59-րդ հոդվածներին և Կառավարության վերոնշյալ որոշմանը:

49. Կառավարությունն այս կապակցությամբ որևէ հայտարարություն չի արել:

50. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կրկին նշում է, որ 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի առաջին և ամենակարևոր պահանջն այն է, որ գույքից անարգել օգտվելուն հանրային իշխանության կողմից ցանկացած միջամտություն պետք է օրինական լինի (տե՛ս *Խաչրիդիսն ընդդեմ Հունաստանի* [GC], թիվ 31107/96, § 58, ՄԻԵԴ 1999-II): Այնուամենայնիվ, իրավական հիմքի առկայությունն ինքնին բավական չէ, որպեսզի բավարարի իրավաչափության սկզբունքը, որը նաև ենթադրում է, որ ներպետական օրենսդրության կիրառելի դրույթներն իրենց կիրառության մեջ բավականին հասանելի, ճշգրիտ և կանխատեսելի են: Այդ սկզբունքով նաև պահանջվում է, որ ՄԻԵԴ-ն ստուգի, թե արդյո՞ք ներպետական օրենսդրության մեկնաբանությունը և ազգային դատարանների կողմից կիրառումը հանգեցնում է այնպիսի հետևանքների, որոնք համապատասխանում են Կոնվենցիայի սկզբունքներին (տե՛ս, օրինակ՝ *Ապոստոլիդիսն և այլք ընդդեմ Թուրքիայի*, թիվ 45628/99, § 70, 2007 թվականի մարտի 27):

51. Սույն գործում ոստիկանության տարածքային բաժանմունքի կողմից դիմումատուին ուղարկված նամակում երեխաներին հաշվառումից հանելու մերժման համար որևէ իրավական հիմք չէր նշվում, այլ պարզապես նշում էր, որ «համաձայն համապատասխան կանոնների՝ անչափահասներին կարելի է հաշվառումից հանել միայն նրանց ծնողներից մեկին հաշվառումից հանելու դեպքում, ծնողների կամ երեխաների օրինական ներկայացուցիչների դիմումի հիման վրա, ուսման կապակցությամբ, կամ դատարանի համապատասխան կարգադրությամբ» (տե՛ս վերոնշյալ 11-րդ պարբերությունը): Երևանի Արաբկիր և

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատարանը և քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը, ոստիկանության տարածքային բաժանմունքի դեմ դիմումատուի հայցը մերժելիս, գտել էին, որ ոստիկանության տարածքային բաժանմունքի մերժումն օրինական է, քանի որ հիմնված էր Կառավարության թիվ 821 Որոշման վրա (տե՛ս վերոնշյալ 13-րդ և 15-րդ պարբերությունները): Վճռաբեկ դատարանն իր հերթին, ինչպես արդեն նշվեց, գտել էր, որ օրենքի կիրառելիության մասով դիմումատուի բողոքը հիմնավորված չէր, քանի որ երեխաները դիմումատուի բնակարանի նկատմամբ բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեին, և որ դիմումատուն կարող էր ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի համաձայն գործ հարուցել, որպեսզի դադարեցներ բնակելի տարածության օգտագործման նրանց իրավունքը՝ փոխհատուցում վճարելով նրանց:

52. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշում է, որ ոստիկանության դեմ դիմումատուի հայցը մերժելիս ազգային դատարանների կողմից վերոնշյալ Որոշման ոչ մի կոնկրետ դրույթ չի մատնանշվել: Փոխարենը, մերժումն օրինական համարելու համար ազգային դատարանները ընդհանուր հղում են կատարել վերոնշյալ Որոշմանը: Այս կապակցությամբ ՄԻԵԴ-ը կցանկանար մատնանշել, որ Կառավարության թիվ 821 Որոշումը 2004 թվականի հունվարի 20-ի նամակում նշված հիմքերով անձի բնակարանում երեխաներին հաշվառումից հանելն ակնհայտորեն արգելող որևէ դրույթ չի պարունակում:

53. Բացի այդ, օրենքի կիրառելիության մասով դիմումատուի հայցը մերժելիս վճռաբեկ դատարանն, իր հերթին, որևէ պատճառ չի մատնանշել՝ դիմումատուի բնակարանի նկատմամբ երեխաների՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքի առկայության կապակցությամբ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտնում է, որ Հայաստանի օրենսդրությունը բնակելի տարածությունում անձի հաշվառումը չի կապել և չի կապում այդ տարածությունում տվյալ անձի՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքի ամրագրման հետ: Այս գաղափարն իրականում պահպանվել է Կառավարության դիտարկումներում: Մասնավորապես, համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ կետի, բնակելի տարածության օգտագործման իրավունքը ծագում է միայն սեփականատիրոջ հետ կնքված գրավոր պայմանագրով (տե՛ս վերոնշյալ 28-րդ և 29-րդ պարբերությունները): Սույն գործի շրջանակներում դիմումատուի և երեխաների միջև նման պայմանագիր կնքված չի եղել: Ավելին, նախքան Քաղաքացիական օրենսգրքի 1999 թվականին ուժի մեջ մտնելը, Բնակարանային օրենսգրքի 55-րդ հոդվածով նախատեսված կարգով բնակելի տարածության օգտագործման իրավունքը տրվում էր տվյալ բնակարանում բնակվելու փաստի ուժով: Սակայն, ինչպես հաստատվել է սույն գործի շրջանակներում, երեխաները դիմումատուի բնակարանում երբեք չեն բնակվել: Ուստի, չի կարելի ենթադրել նաև, որ Բնակարանային օրենսգրքի ուժով երեխաները բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեին:

54. Ուստի կարելի է եզրակացնել, որ թե՛ երեխաներին դիմումատուի բնակարանում հաշվառումից հանելու վերաբերյալ ոստիկանության մերժումը, թե՛ նրանց փոխհատուցում վճարելու պահանջը, որպեսզի դադարեցվի տվյալ բնակարանի նկատմամբ նրանց՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը, հստակ իրավական հիմնավորում չունենին: Նման եզրակացության հանգեցրել՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը համապատասխանաբար գտնում է, որ դիմումատուն պարտավոր չէր 225-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն առանձին գործ հարուցել, որպեսզի, փոխհատուցում վճարելով, դադարեցնե՞ր երեխաների՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը: Ուստի, պաշտպանության բոլոր միջոցները չսպառելու մասին Կառավարության համապատասխան առարկությունը պետք է մերժվի:

55. Ընդհանուր առմամբ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կցանկանար առանձին մատնանշել, որ չնայած նշվել էր, որ անչափահասներին կարելի է հաշվառումից հանել միայն նրանց ծնողներից մեկին հաշվառումից հանելու դեպքում, ո՛չ ոստիկանության տարածքային բաժանմունքը, ո՛չ էլ ազգային դատարանները հաշվի չէին առել այն հանգամանքը, որ փաստորեն դեռևս 1996 թվականին երեխաները դիմումատուի բնակարանում հաշվառումից չէին հանվել իրենց մորը հաշվառումից հանելու ժամանակ, մինչդեռ երեխաներն իրենց հոր հետ բնակվել էին վերջինիս բնակության վայրում՝ այլ քաղաքում:

56. Վերոնշյալի հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտնում է, որ այն ձևը, որով Հայաստանի իշխանությունները մերժել են երեխաներին դիմումատուի բնակարանում հաշվառումից հանել, այն է՝ ընդհանուր հղում կատարելով Կառավարության թիվ 821 Որոշմանը և պահանջելով, որ փոխհատուցում վճարվի նրանց, որպեսզի դադարեցվի իր բնակարանի նկատմամբ բնակելի տարածության օգտագործման նրանց ենթադրյալ իրավունքը, հանգեցրել է ներպետական օրենսդրության անկանխատեսելի կիրառման և, հետևաբար, չի համապատասխանում իրավաչափության և օրենքի գերակայության սկզբունքին: Հետևաբար, իր գույքից անարգել օգտվելու դիմումատուի իրավունքին միջամտելն օրենքով նախատեսված չի եղել:

57. Ուստի, թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում է տեղի ունեցել:

III. ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

58. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հիման վրա դիմումատուն բողոքել է, որ դատավարությունն անարդար է եղել, քանի որ իրեն չեն ծանուցել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատարանում լսումների մասին և իրեն վերաքննիչ դատարանում բանավոր հայտարարություն անելու հնարավորություն չի տրվել:

59. Հաշվի առնելով իր տիրապետման տակ եղած նյութերը և այնքանով, որքանով այս բողոքը վերապահված է իր ենթակայությանը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտնում է, որ դա Կոնվենցիայով և դրա

Արձանագրություններով սահմանված իրավունքների և ազատությունների որևէ խախտում չի դրսևորվում: Հետևաբար, Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն գանգատի այս մասը պետք է մերժվի՝ որպես ակնհայտորեն անհիմն:

IV. ԿՈՆՎԵՆՏՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Համաձայն Կոնվենցիայի 41-րդ հոդվածի՝

«Եթե Դատարանը գտնում է, որ Կոնվենցիայի կամ դրա Արձանագրությունների խախտում է տեղի ունեցել, և եթե տվյալ Բարձր պայմանավորվող կողմի ներքին օրենսդրությունը նախատեսում է միայն մասնակի փոխհատուցում, ապա Դատարանը, անհրաժեշտության դեպքում, տուժող կողմին արդարացի փոխհատուցում է տրամադրում»:

Ա. Վնասը

60. Դրամական վնասի համար, որը դիմումատուն հաշվարկել էր բնակարանը վարձակալության տալուց բխող բաց թողնված օգուտների հիմա վրա, նա 8 060 եվրո էր պահանջում: Նա նաև ոչ դրամական վնասի համար 100 000 եվրո էր պահանջում, որն անհրաժեշտ էր իր առողջական վատ վիճակի վերականգնման համար: Այս կապակցությամբ նա պնդում էր, որ իր իրավունքների խախտման հետ կապված տառապանքների և սթրեսի արդյունքում նա հիվանդություն է ձեռք բերել:

61. Կառավարությունը նշում է, որ դրամական վնասի հետ կապված դիմումատուի պահանջը պետք է մերժել, քանի որ նրա իրավունքների ոչ մի խախտում տեղի չի ունեցել, քանի որ նա ո՛չ *դե յուրե (de jure)*, ո՛չ էլ *դե ֆակտո (de facto)* չի զրկվել իր բնակարանը վարձակալության հանձնելու հնարավորությունից, և քանի որ ենթադրյալ խախտման և պահանջված դրամական վնասի միջև ոչ մի պատճառական կապ չկա: Նույն չափորոշիչը պետք է կիրառվի նաև ոչ դրամական վնասի կապակցությամբ, քանի որ դա պահանջելով՝ դիմումատուն փաստորեն փոխհատուցում էր հայցում բուժման համար, որն ըստ էության դրամական վնաս է: Ավելին, դիմումատուն որևէ ապացույց չի ներկայացրել ի հավաստումն իր այն պնդման, որ իր առողջական խնդիրները կապված էին Կոնվենցիայով իրեն վերապահված իրավունքների ենթադրյալ խախտման հետ: Ամեն դեպքում, նա որևէ փաստաթղթային ապացույց չի ներկայացրել, որով կհիմնավորեր պահանջվող ոչ դրամական վնասի չափը:

62. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշում է, որ գործի նյութերում այնպիսի բան չկա, ըստ որի՝ երեխաների հաշվառված լինելու պատճառով դիմումատուն իր բնակարանը վարձակալության հանձնելու հնարավորություն չունենար: Ուստի, հայտնաբերված խախտման և դիմումատուի նշած բաց թողնված օգուտի միջև պատճառական կապ չկա: Հետևաբար,

դրամական վնասի փոխհատուցման դիմումատուի պահանջը պետք է մերժվի: Միևնույն ժամանակ ՄԻԵԴ-ը գտնում է, որ իր զարմիկներին իր բնակարանում հաշվառումից հանելու անհնարինության պատճառով դիմումատուն ոչ դրամական վնաս է կրել: Արդարության հիմունքներով վճիռ կայացնելով՝ այդ կապակցությամբ Դատարանը դիմումատուին 3 000 եվրո է հատկացնում:

Բ. Ծախսերն ու ծախսումները

63. Դիմումատուն ծախսերի և ծախսումների համար ընդհանուր 1111 եվրո է պահանջել՝ ներառյալ 522 եվրո՝ ազգային վարույթների ժամանակ իրավական, նոտարական և դատական տուրքերի, ինչպես նաև փոխադրման ծախսերի և տարբեր վարչարարական ծախսերի, ինչպես օրինակ՝ փոստային ծառայության, տպագրման և պատճենահանման ծախսերի համար, և 589 եվրո՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում առաջացած իրավական և նոտարական տուրքերի, ինչպես նաև փոստային ծառայության և թարգմանչական ծախսերի համար:

64. Կառավարությունը պնդում է, որ դիմումատուն որևէ ապացույց չի ներկայացրել առ այն, որ այդ ծախսերն իրականում կատարվել են: Բացի դրանից, ինչ վերաբերում է օրինական ներկայացուցչին տրամադրված վճարներին և դիմումը Դատարան ներկայացնելու հետ կապված ծախսերին, դիմումատուն չի ապացուցել, որ դրանք անհրաժեշտ և ողջամիտ ծախսեր են եղել:

65. Համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ դիմումատուն ծախսերի և ծախսումների փոխհատուցման իրավունք ունի միայն այնքանով, որքանով ցույց է տրվում, որ դրանք իրականում և անհրաժեշտաբար են կատարվել, դրանց չափը եղել է ողջամիտ: Այս կապակցությամբ ՄԻԵԴ-ը նշում է, որ դիմումատուն որևէ փաստաթղթային ապացույց չի ներկայացրել, որով կհիմնավորեր ծախսերի և ծախսումների հետ կապված իր պահանջները: Ամեն դեպքում, դիմումատուին իրավաբանական օգնություն է ցուցաբերվել ՄԻԵԴ-ի կողմից: Հետևաբար, Դատարանը որոշում է այս մասով դիմումատուին որևէ հատկացում չկատարել:

Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

66. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նպատակահարմար է գտնում, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխառության տրամադրման առավելագույն տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոս:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ

1. որոշում է միանալ գործի ըստ էության լուծման համար նախատեսված ներպետական պաշտպանության միջոցները չսպառելու վերաբերյալ Կառավարության առարկությանը և մերժել այն.
2. հայտարարում է, որ իր գույքից անարգել օգտվելու դիմումատուի իրավունքին միջամտության վերաբերյալ բողոքն ընդունելի է, իսկ դիմումի մնացած մասն՝ անընդունելի.
3. վճռում է, որ թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում է տեղի ունեցել.
4. վճռում է, որ
 - ա) պատասխանող պետությունը, վճիռը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում ոչ դրամական վնասի համար դիմումատուին պետք է վճարի 3 000 եվրո (երեք հազար եվրո) գումար՝ ավելացրած վճարման ենթակա հարկերը, որը պետք է փոխարկվի պատասխանող պետության արժույթի՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով,
 - բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո մինչև վճարման օրը վերը նշված գումարի դիմաց պետք է պարզ տոկոս վճարվի՝ Եվրոպական կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխառության տրամադրման առավելագույն տոկոսադրույքի չափով պարտավորությունների չկատարման ժամանակահատվածի համար՝ ավելացրած երեք տոկոս.
5. մերժում է դիմումատուի արդարացի փոխհատուցման պահանջի մնացյալ մասը:

Կատարված է անգլերեն լեզվով և գրավոր ծանուցվել է 2012 թվականի հոկտեմբերի 2-ին՝ համաձայն Դատարանի Կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ կետերի:

Սանտիագո Քուեսադա
Քարտուղար

Ջոզեֆ Կասադեվալ
Նախագահ